4 հուլիսի 2012 թվականի N 871 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱ-ԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 462 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 29-ի «Օլիմպիական խաղերում և աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում առավել բարձր ցուցանիշների հասած մարզիկներին, մարզիչներին, բժիշկներին և մարզական կազմակերպություններին դրամական մրցանակներ շնորհելու մասին» N 462 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման վերնագիրը, 1-ին կետը, N 1 հավելվածի վերնագիրը, N 2 հավելվածի

2-րդ և 4-րդ կետերը «օլիմպիական» բառից հետո լրացնել «պարալիմպիկ, սուրդլիմպիկ» բառերով.

2) որոշման N 1 հավելվածում՝

ա. «Շախմատի համաշխարհային օլիմպիադա և պատանեկան օլիմպիական խաղեր» և «Միջազգային օլիմպիական կոմիտեի կողմից ճանաչված ոչ օլիմպիական

մարզաձևեր, սամբո, ըմբշամարտ, միջազգային շաշկի» բաժինները համապատասխանաբար համարակալել «2» և «4» թվերով,

բ. 2-րդ բաժնից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ բաժնով.

«3. ՇԱԽՄԱՏԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

1-ին տեղ	500.0	250.0	100.0	50.0
2-րդ տեղ	300.0	150.0	60.0	30.0
3-րդ տեղ	200.0	100.0	40.0	20.0

»,

գ. հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ բաժնով.

«5. ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ՍՊՈՐՏՈՒՄ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԵՎ ՍՈՒՐԴԼԻՄՊԻԿ ԽԱՂԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՐԶԱՁԵՎԵՐ

ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԽԱՂԵՐ				
1-ին տեղ	3500.0	1750.0	700.0	350.0
2-րդ տեղ	2500.0	1250.0	500.0	250.0
3-րդ տեղ	2000.0	1000.0	400.0	200.0
ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՒՐԴԼԻՄՊԻԿ ԽԱՂԵՐ				
1-ին տեղ	1250.0	625.0	250.0	125.0
2-րդ տեղ	800.0	400.0	160.0	80.0
3-րդ տեղ	500.0	250.0	100.0	50.0
ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ				
1-ին տեղ	800.0	400.0	160.0	80.0
2-րդ տեղ	500.0	250.0	100.0	50.0
3-րդ տեղ	300.0	150.0	60.0	30.0

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. հուլիսի
Երևան

12_0871